ի սուր մաշեալ զթշնամիս՝ ազատ կացուցին զաշխարհն ի նոցին բռնակալութեանց։ Ի վերջոյ որպէս Հայաստան նոյնպէս և Աղուան տկարացեալք ի զօրութեանց և ճնշեալք անդադար ի Պարսից, մտին ընդ հպատակութեամբ նոցին։ Եւ յօրէ յայնմանէ բառնալ սկսաւ յԱղուանից բազուկ իշխանութեան Հայոց, մնաց միայն անխզելի կապ Աստուածային սիրոյ և Քրիստոնէական հաւատոյ, որպէս հաւաստի առնէ սուրբ վարդապետն Եղիշէ։ Զի երբ Վաչէ քեռորդի Ցազկերտ արքայի ընկալաւ զմոլութիւն, և ի ձեռն նորա բազմացան ատրուշանք աշխարհին Աղուանից, և զօրացաւ բռնութիւն ուրացութեան կրօնից, Հայք միաբանեալք հիմն ի վեր տապալեցին զատրուշանս նոցա և ազատարարին զնոսա ի լծոյ կռապաշտութեանց։ Թէպէտ Վաչէ թագաւոր Աղուանից, քեռորդի Ցազկերտի՝ զկնի մահուան նոյն իսկ Ցազկերտի երստին դարձաւ ի հայրենի կրօնս իւր, միաւորեաց ընդ իւր զերկոտասան լեռնական թագաւորութիւնս և ի սարսափ էած զօրացն, Պարսից յաւուրս Պերոզի, բայց Պարսիկք զօրացեալք ի ձեռն Հոնաց-Խազրաց նուաճեցին զաշխարհն Աղուանից և արարին ոտնակոխ։ Վաչէ այնուհետեւ ընկալեալ զաւետարանն Քրիստոսի՝ մեկուսացաւ յաշխարհէ, լքեալ թողլով գլխովին զաշխարհն Աղուանից։

«Աղուան մնա՛ց այրի անօգնական զամս երեսուն, յորս բազմացան Ատրուշանք և յաճախեցաւ կրակապաշտութիւն ցաւուրս Վաչականայ առաջնոյ. բայց երբ Արտաշիր յաջորդ Պերոզի ետան զհրովարտակ ազատութեան հաւատոյ՝ յորդորեալ ի Վահանայ Ամատունւոյ, զօրացեալ Վաչականայ արքային Աղուանից շինէր զեկեղեցիս և զմենաստանս, կարգէր զպաշտօնեայս, կառուցանէր զդպրոցս և յաւուրց անտի յառաջնոց զուրացեալ իշխանն ածէր ի հաւատս Աստուածպաշտութեան, մաքրէր զԱղուանս ի դիւապաշտ մոլորութեանց, զորդիս մատնահատ կախարդաց, քրմաց և այլոց մուծանէր ի դպրոցս, ուսուցանէր նոցա զճշմարիտ կրօնս Աստուածպաշտութեան։ Զսերմանեալ մոլորութիւնս ի ժամանակաց անտի առաջնոց արմատախիլ առնէր, և զբանս Աստուածային սփռէր ի հոգիս հաւատացելոց՝ դնելով առաջի նոցա զանտանելի տառապանս, զորս կրեցին